


# Մեր ժամանակվա նախազգուշացումը

## Ապագան՝ առանց պատրանքերի

Անցած տարիներին աշխարհը հարաճուն աղետների վկան դարձավ: Երաշտները, ջրհեղեղը, կործանիչ փոթորիկները – երկրաշարժերը անընդմեջ հաջորդում էին մեկը մյուսին: Հազարավոր մարդիկ զրկվեցին կյանքից ծովում, ցամաքում – օդում տեղի ունեցած դժբախտ պատահարների ժամանակ: Միլիոնավորներ սովահար են: Շատ երկրներ (օրինակ՝ Բրազիլիան – Մեքսիկան) սնանկ են՝ անկարող վճարելու իրենց պարտքերը: Պատերազմները, ժողովրդական ապստամբությունները, խռովությունները, գերբնակեցվածությունը էկոլոգիական բնապահպանական – անընդմեջ աղետները մարդկանց վախ են ներշնչում ապագայի հանդեպ:

*Այս իրադարձություններից շատերը կանխագուշակված են Աստվածաշնչում* (Մատթեոս 24.4-31, Ղուկաս 21.25-28, Հայտնություն 6.12-17, 8.13, 9.20-21, 16-17-18 գլուխները):



***Աստված միշտ նախազգուշացրել է մարդկանց գալիք դատաստաններից առաջ, որոնք թափվում էին նրանց վրա որպես անաստվածության հետ-անք*** (Եսայիա 24.5-20, 46.9-10, Ամովս 3.7, Հայտնություն 1.1):

## Անցյալի դասերը

Աստված հայտնեց, օրինակ, Նոյին գալիք մեծ **ջրհեղեղի** մասին, Աբրահամին – Ղովտին՝ **Սոդոմ – Գոմոր քաղաքների կործանման** մասին, Մովսեսին՝ **Եգիպտոսի հանդեպ մահապատիժների մասին:**

Այս բոլոր իրադարձությունները գրվել են ներկա ժամանակաշրջանի համար՝ որպես ուսանելի օրինակներ, որոնք տրված են մեզ բացատրելու, որ Աստվածաշնչի մարգարեական բոլոր նախազգուշացումները զարմանալի կերպով իրականացել են – կիրականանան ապագայում (Ա Կորնթացիս 10.6-12, Բ Պետրոս 2.5-9, Եբրայեցիս 4.11):

Աստծո համոզիչ, հաստատակամ նախազգուշացումները մեզ՝ վերջին սերնդիս, տրված են
միջոցով, որը գտնվում է Հովհաննեսի Հայտնության 14-րդ գլխում: Այն վերջին հրավերն է, որ Աստված տալիս է բոլոր մարդկանց Հիսուս Քրիստոսի՝ մեր Թագավորի – Դատավորի երկրորդ գալուստից առաջ:

Այն պարունակում է ամենալուրջ նախազգուշացումը՝ գալիք դատաստանից առաջ, որ միայն կարելի է գտնել Աստվածաշնչում՝



### Երեք հրեշտակների ուղերձը

1. ***«Վախեցեք Աստծուց – փառք տվեք նրան***, ***որովհետ- նրա դատաստանի ժամը եկավ***, *– երկրպագեցեք երկինքը – երկիրը – ծովը – ջրերի աղբյուրները Ստեղծողին»:*

2. *«Ընկավ, ընկավ Բաբելոն մեծ քաղաքը, որովհետ- իր պոռնկության բարկության գինուց խմեցրեց բոլոր ազգերին»:*

3. *«Ով որ* ***երկրպագություն է անում գազանին – նրա պատկերին*** *–* ***դրոշմ ընդունում իր ճակատի կամ իր (աջ) ձեռքի վրա***, *այնպիսին Աստծո սրտմտության գինուց պիտի խմի, որ անխառն լցված է նրա բարկության բաժակի մեջ, – պիտի տանջվի կրակի – ծծմբի մեջ սուրբ հրեշտակների – Գառի առաջին: Եվ նրանց տանջանքի ծուխը վեր է ելնում հավիտյանս հավիտենից, – հանգիստ չունեն ցերեկ ու գիշեր նրանք, որ երկրպագեցին* ***գազանին*** *–* ***նրա պատկերին*** *– ով որ ընդունում է նրա անունի դրոշմը»* **(Հայտնություն 14.6-11):**

Այս կոչն ամենքի համար ունի կենսականորեն կար-որ նշանակություն: Բայց ինչպե՞ս կարող ենք մենք խուսափել հիշատակված *գազանին* – նրա *պատկերին* երկրպագելուց, եթե մենք չգիտենք, թե ինչ են դրանք նշանակում: Գիտելիքների անբավարարությունն այստեղ մահացու հետ-անքների կհասցնի: *«Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չլինելու համար»* (Ովսեե 4.6, համեմատել Եսայիա 29.13,14):

Սակայն Աստված կանխազդարարել է, որ ցանկանում է այս լուրը տալ անկեղծորեն հավատացող մարդկանց (Առակաց 2.1-7, Դանիել 12.4-10, Մատթեոս 7.7-8):

*«Նրանց ասա՝ Կենդանի եմ ես, ասում է Տեր Եհովան, որ ես ամբարշտի մեռնելը չեմ ուզում, այլ որ ամբարիշտը դարձի գա իր ճանապարհից – ապրի: Դարձե՛ք, դարձե՛ք ձեր չար ճանապարհներից, – ինչու՞ համար դուք մեռնեք, ո՛վ Իսրայելի տուն»* (Եզեկիել 33.11, համեմատել Բ Պետրոս 3.10-11, Մաղաքիա 3.18-4.2):

## Ի՞նչ է նշանակում գազանի դրոշմ

Մինչ գազանին անդրադառնալը, մենք պետք է պարզաբանենք իրադարձությունների իսկական պատճառը – պատմական զարգացումը՝ մինչ- նրա առաջացումը: Ավելի լավ է սկսենք Դանիելի գրքից, որտեղ ցնցող կերպով կանխագուշակված են Ք.ծ.ա. VI դարից մինչ- մեր ժամանակվա իրադարձությունները: **Այնտեղ օգտագործված խորհրդանշանների մեկնությունը տրված է ոչ մարդկային գուշակների կողմից: Աստվածաշնչյան մարգարեությունները՝ դրանք գրված պատմություններ են: Աստվածաշունչը հենց ինքն է տալիս մեզ հասկանալու բանալին** (Բ Պետրոս 1.20):



Մարգարեության մեջ որպես **«գազան»** հասկացվում է թագավոր կամ թագավորություն: Դանիելի 7.17-23-ում մեզ բացատրվում է. *«Այս չորս գազանները՝ չորս թագավորներ են վեր կենալու երկրից... չորրորդ գազանը չորրորդ թագավորությունն է լինելու երկրի վրա...»:* Դանիել 7.3-ում կարդում ենք. *«Եվ չորս մեծամեծ գազաններ ելան ծովից...»:* **«Ծովը»** կամ **«ջուրը»** *«ժողովուրդներ են, – բազմություններ – ազգեր, – լեզուներ»* (Հայտնություն 17.15, համեմատել Եսայիա 8.7): Դանիել գրքի 7-րդ գլխում մարգարեին ցույց է տրվել ապագա համաշխարհային պետությունները՝ գազանների տեսքով: Զուգահեռ նկարագրություն մենք գտնում ենք Դանիելի 2.27-45-ում, որտեղ արձանի մարմնի առանձին մասերը զարմանալիորեն խարհրդանշում են համաշխարհային պատմության ընթացքը:

### Առյուծ



*«Առաջինը առյուծի պես էր...»* (Դանիել 7.4, համեմատել Դանիել 2.37-38): Այսպես է ներկայացված **բաբելոնյան կայսրությունը** (Ք.ծ.ա. 605 - 536 թ.թ.), որը տիրում էր աշխարհին Դանիելի ժամանակներում: Այսօր էլ, որքան զարմանալի է, Բեռլինի «Պերգամոն» թանգարանում կարելի է տեսնել թ-ավոր առյուծներ, որոնք այն ժամանակվա պատմական վկաներն են:

### Արջ



*«Եվ ահա մի ուրիշ գազան՝ երկրորդը՝ արջի նման, – մեկ կողմի վրա կանգնեց, – երեք կողքի ոսկորներ ուներ բերանում՝ ատամների մեջ, – այսպես ասացին նրան՝ Վե՛ր կաց, շատ միս կեր»* (Դանիել 7.5): Այդ գազանն ուներ նա- այն նշանակությունը, ինչ արձանի արծաթե կուրծքը երկու ձեռքերի հետ միասին (Դանիել 2.32,39): Այն խորհրդանշում է բաբելոնյան կայսրությանը փոխարինած պետությունը՝ **Մարաց - Պարսից երկթագավորությունը** (Ք.ծ.ա. 536 - 331 թ.թ.): Այն բաժանված էր երկու մասի՝ պետության, ուր կառավարում էին մարերը, իսկ հետո՝ պարսիկները: Արձանի երկու ձեռքերը – մի կողմի վրա կանգնած արջը հստակորեն արտահայտում են այդ առանձնահատկությունը՝ պետության մի կեսն ավելի հզոր կլինի մյուսից: Երեք ոսկորները խորհրդանշում են Մարաց - Պարսից թագավորության կողմից զավթած պետությունները՝ Բաբելոնը, Լիդիան – Եգիպտոսը:

### Ինձ



*«Սրանից հետո նայում էի, – ահա մի ուրիշը՝ ինձի նման, որի մեջքին չորս թ-եր կային, – չորս գլուխ ուներ գազանը, – իշխանություն տրվեց նրան»* (Դանիել 7.6): Այս գազանը նույնպես իր արտացոլումն է գտնում Դանիել 2.32-39-ում: **Դա հունական թագավորությունն էր** (Ք.ծ.ա. 331 - 168 թ.թ.)՝ կայսր Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ նվաճվեց Պարսկաստանը, որը նրա մահից հետո բաժանվեց չորս մասի (ներկայացված է չորս գլուխներով՝ Մակեդոնիա, Թրակիա, Սիրիա – Եգիպտոս):

### Չորրորդ գազանը



*«Սրանից հետո տեսնում էի գիշերվա տեսիլքում, – ահա մի չորրորդ գազան՝ ահեղ, սոսկալի – չափազանց զորավոր, որ երկաթի մեծ ատամներ ուներ, ուտում էր – փշրում, – մնացածը ոտներով կոխ էր տալիս, – նա տարբեր էր իրենից առաջ եղող բոլոր գազաններից, –* ***տասը եղջյուր ուներ»*** (Դանիել 7.7): Այս գազանին կրկին գտնում ենք Դանիել 2.33,40-ում: Դա Հունաստանին հաջորդող չորրորդ մեծ տերությունը՝ **հռոմեական կայսրությունն էր** (Ք.ծ.ա. 168թ. - Ք.ծ.հ. 476թ.): Այս գազանը չափազանց տարբերվում էր Դանիելի տեսած բոլոր մնացածներից, դրա համար նա չկարողացավ ավելի մանրամասն նկարագրել այն: Դանիել 7.24-ում ***«տասը եղջյուրները»*** նշանակում են, որ *«այս թագավորությունից կելնեն տասը թագավորներ»*: Դա պատմական փաստ է, որ հռոմեական կայսրությունը **476 թ. Ք.ծ.հ.** քայքայվեց – հենց նույն տեղում հաստատվեցին գերմանական տասը իշխանություններ, որոնք այսօրվա եվրոպական պետություններն են: Դանիել 7.7-ին զուգահեռ դրանք ներկայացված են Դանիել 2.41-42-ում՝ որպես արձանի ոտքերի մատներ: Դրանք հետ-յալ ցեղերն են՝ 1. ալեմաններ (Գերմանիա), 2. ֆրանկներ (Ֆրանսիա), 3. անգլոսաքսեր (Մեծ Բրիտանիա), 4. բուրգունդներ (Շվեյցարիա), 5. վեստգոթեր (Իսպանիա), 6. սվ-ներ (Պորտուգալիա), 7. լոմբարդներ (Իտալիա); 8. հերուլներ, 9. վանդալներ, 10. օստգոթեր:

### Փոքր եղջյուրը



*«Ես մտիկ էի տալիս այն եղջյուրներին, – ահա մի ուրիշ* ***փոքր եղջյուր դուրս ելավ նրանց մեջ***, *– այն առաջի եղջյուրներից* ***երեքը*** *խլվեցին* ***նրա առաջից***, *– ահա մարդի աչքերի պես աչքեր կային այդ եղջյուրի վրա – մի մեծ-մեծ բաներ խոսող բերան»* (Դանիել 7.8):

### Տարբեր հատկանիշներ նույնացման համար

**1.** Նա դուրս եկավ տասը եղջյուրների (թագավորությունների) *միջից*, – տաս եղջյուրներց *երեքը* վայր ընկան նրա հզորացման ընթացքում:

**2.** Դանիել 7.24-ում ասվում է՝ փոքր եղջյուրը պետք է դուրս ելնի տաս եղջյուրների հայտնվելուց հետո: Համաշխարհային պատմության մեջ միայն մեկ հզոր կազմակերպություն է համապատասխանում այս նկարագրությանը: Հենց Հռոմում՝ կործանված համաշխարհային կայսրության կենտրոնում **Ք.ծ.հ. 476թ**. առաջացավ պապությունը՝ մեկ մարդու կողմից կառավարվող կաթոլիկությունը: Նրա իշխանության կազմավորման ժամանակ «խլվեցին նրա առաջից գերմանական *երեք ժողովուրդները՝ հերուլները, վանդալները – օստգոթերը:* Հռոմեական կայսր Հուստինիանոսի հրամանով **Ք.ծ.հ. 533թ.** (Codex Justinianus) հռոմեական եպիսկոպոսը դարձավ բոլոր քրիստոնեական եկեղեցիների գլուխը: Հենց որ գերմանական երեք ցեղերից վերջինը (օստգոթերը), որն ընդդիմացավ այս հրամանին, **Ք.ծ.հ. 538թ.** կայսերական գեներալ Բելիզարիուսի կողմից ջախջախվեց – վտարվեց Հռոմից, պապական Հռոմի իշխող քաղաքական դիրքը հաստատվեց մարգարեությամբ կանխագուշակված ժամանակահատվածում (տե՛ս ստոր-):

**3.** Դանիել 7.25-ում գրված է, որ *«Բարձրյալի սուրբերին հարստահարելու է»,*- քրիստոնյաների մեծ հալածանքների վկայակոչում: Պատմության ոչ մի գիտակ չի կարող չընդունել, որ այս կանխագուշակությունը նույնպես իրականացվել է պապության կողմից: Միջնադարի սարսափելի հալածանքները (խարույկի վրա այրելը, հերետիկոսների նկատմամբ դատավարությունները, խաչակրաց արշավանքները) պատմության հայտնի – մռայլ էջերից են:



**4.** Հետո *«...խորհելու է, որ ժամանակներն ու օրենքները փոխի...»:* Պապական համակարգը փաստորեն փոխեց Աստծո օրենքը՝ տասը պատվիրանները, որոնցում **երկրորդ պատվիրանը**՝ *«Քեզ համար կուռք չշինես ոչ մի բանի նմանությանբ – չերկրպագես ու չպաշտես նրանց»,* ընդհանրապես քրիստոնեական ուսմունքի հիմնական սկզբունքներից (Կատեխիզիս) հեռացվել է, իսկ **չորրորդ պատվիրանը**՝ *շաբաթ օրվա սրբության մասին* (որը միակ պատվիրանն է, որ վերաբերում է ***«ժամանակներին»***), փոխված է – Աստծո հանգստի օրը յոթերորդ օրից տեղափոխված է առաջին օրը (համեմատել Բ Թեսաղոնիկեցիս 2.3,4, Սաղմոս 94.20):

Պապությունը փոխեց երկրպագության ***«ժամանակը»***: Հաստատվեց երկրպագության կեղծ օր: Յոթերորդ օրվա նախասկզբնական անփոփոխ տեղը (համեմատել Ելից 20.8-11, 31.13,16,17, Եզեկիել 20.1-2, Եսայիա 56.2,3,6,7, Սաղմոս 89.35,

Եբրայեցիս 4.11, Հակոբոս 2.10)՝ **յոթերորդ օրը**, որը պահեցին Քրիստոսն ու առաքյալները (Ղուկաս 4.16, Մատթեոս 24.20, Գործք Առաքելոց 13.42, Եբրայեցիս 4.10,11), գրավեց շաբաթվա **առաջին օրը** (ար–ի հեթանոսական օրը), որը Տերը երբեք չէր պատվիրել պահելու, այլ, ընդհակառակը, նույնիսկ նախազգուշացնում էր Իր ժողովրդին դրանից (Հայտնություն 14.9-11, 16.2, 19.20, համեմատել Եզեկիել 8.16-18):

**5.** *«Եվ նրան տրվեց մի բերան՝ մեծ-մեծ բաներ – հայհոյանք խոսող: Եվ նա իր բերանը բացեց Աստծո դեմ հայհոյանքներով, որ հայհոյեց նրա անունին – նրա խորանին – երկնքում բնակվողներին»:* (Հայտնություն 13.5-6, համեմատել Դանիել 7.8,25, 8.25, Բ Թեսաղոնիկեցիս 2.3-4):

Աստվածաշունչն ինչպիսի՞ սահմանում է տալիս աստվածահայհոյությանը: Մի անգամ Քրիստոսին հանդիմանեցին աստվածահայհոյության մեջ. *«...որ դու, մարդ լինելով, **քո անձն Աստված ես անում»*** (Հովհաննես 10.33): Մեկ ուրիշ աստվածահայհոյության մասին կարդում ենք Ղուկաս 5.21-ում՝ *«Սա ո՞վ է, որ հայհոյանք է խոսում. ո՞վ կարող է **մեղք** թողել՝ բացի միայն Աստված»:* Աստվածահայհոյության նշված երկու տեսակն էլ հաստատվում են պապության մեջ (***«Մենք այս երկրի վրա զբաղեցնում ենք ամենազոր Աստծո տեղը»*** Լ–ոն XIII պապի 20.06.1894թ. պապական կոնդակը): Պապին հաճախ անվանում են «սուրբ հայր՝ չնայած այն բանին, որ Հիսուսն արգելեց մարդկանց այդպես դիմել (Մատթեոս 23.9), քանի որ այդպես դիմելը վերաբերում է բացառապես Երկնային Հորը (Հովհաննես 17.11):

**6.** Դանիել 7.25-ում – Հայտնություն 12.14-ում կանխագուշակված է պապական իշխանության տ–ողությունը ***երեք ու կես ժամանակ***, Հայտնության 11.2-ում – 13.5-ում՝ ***42 ամիս***, 11.3-ում – 12.6-ում՝ ***1260 օր***.

Մարգարեական ժամանակի հաշվարկման աստվածաշնչյան չափանիշը՝ ***1 օրը = 1 տարի*** (տե՛ս Եզեկիել 4.6, Թվոց 14.34), պարզ ցույց է տալիս, որ նշված այդ բոլոր ժամանակների դեպքում խոսքը գնում է մի–նույն ժամանակաշրջանի մասին՝ իսկապես 1260 տարվա մասին: Ժամանակը այն ժամանակվա խոսակցական հասկացողության մեջ նշանակել է 1 տարի: Այն ժամանակ լուսնային տարին հաշվվում էր 360 օր:

Լուսնային տարին 30 օրից է բաղկացած (համեմատել Ծննդոց 7.11,24, 8.4): Ելնելով այս դատողությունից՝ պարզվում է, որ երեք ու կես ժամանակը (տարի) բազմապատկվում է 12 ամսով, ստացվում է 42 ամիս: 42 ամիսը բազմապատկած 30 օրով՝ ստացվում է 1260 օր կամ պատմության իրական 1260 տարի:
Իսկապես կանխագուշակված ժամանակը ճշգրտորեն իրականացավ պապության պատմության մեջ: **Ք.ծ.հ. 538 թ.** օստգոթերի բնաջնջումը՝ որպես վերջին «եղջյուրի», որն ընդդիմացավ պապության տիրապետմանը, հանրահայտ է որպես պապականության քաղաքական տիրապետության սկիզբ:




Եթե մենք այդ թվականից հաշվենք 1260 տարի, ապա կհասնենք **Ք.ծ.հ. 1798** թվականը: Հենց այդ տարի՝ ֆրանսիական հեղափոխության ժամանակ, ֆրանսիական գեներալ Բերթյեի կողմից գերի վերցվեց Պիոս VI պապը, որը մահացավ բանտում: Այսպես կատարվեց նա– այս մարգարեությունը՝ *«Եթե մեկը գերության քաշի, գերության պիտի քաշվի»* (Հայտնություն 13.10): Էլ երբեք պապությունը չունեցավ այդպիսի բացահայտ հզորություն – ազդեցություն, ինչպիսին ուներ մինչ այդ: Հաստատվեց ժողովրդական սահմանադրություն, – Հռոմը հռչակվեց հանրապետություն: Դրանով կոտրվեց պապության հզորությունը: Ճիշտ այնպես, ինչպես այն կանխագուշակված է մարգարեությունում՝ 1260 տարի հետո:

Հայտնություն 13.1-10-ում համառոտակի բնութագրված է պապական տիրապետության ամբողջ պատմությունը, թե ինչպես է առաջանում հռոմեական համաշխարհային կայսրության քայքայումից, կառավարում է 1260 տարիների ընթացքում – վերջում ստանում է մահացու վերք:

**7.** Հայտնություն 13.3-ն ասում է. *«Եվ տեսա նրա գլուխներից մեկը մեռնելու չափ խոցված, **– նրա մահի վերքը ողջացավ, – բոլոր երկիրը զարմացավ այն գազանի ետ–ից»:*** Պարզ է դառնում, որ այդ իշխանությունը գոյություն է ունենալու մինչ– Քրիստոսի գալուստը (Դանիել 7.21,22):

**8.** Մահացու վերք ստանալու – իշխանության վերականգնման միջ– ընկած ժամանակահատվածում հայտնվում է –ս մեկ ուրիշ գազան՝ *«Եվ ես տեսա մի **ուրիշ գազան՝ դուրս գալիս երկրից**, – երկու եղջյուր ուներ գառի նման, բայց խոսում էր վիշապի նման: Եվ այն առաջի գազանի բոլոր իշխանությունը բանեցնում էր նրա առաջին, – այնպես էր անում, որ երկիրը – նրա վրա բնակվողները երկրպագեն այն առաջի գազանին, որի մահի վերքը ողջացել էր»* (Հայտնություն 13.11,12):

## Ի՞նչ իշխանության մասին է խոսքը:

| **Խորհրդանշաններ** | **Նշանակությունը** |
|---|---|
| 1. Նա դուրս է գալիս երկրից (Հայտնություն 13.11) | 1. Առաջանում է նոր ու սակավաբնակերկրում: |
| 2. Գալիս է գազանի անկմանժամանակ,որ դուրս է գալիսծովից (1798 Otkr.13,1.3.10): | 2. Դառնալով ազգ Պապականիշխանության անկման ժամանակ (1763-1800) |
| 3. Նա ունի երկու գառնուկիեղջյուրներ (Հայտնություն 13.11): | 3. Երկու քրիստոնեականսկզբունքները տալիս ենիշխանությունը (քաղաքացիական եւկրոնական ազատություն) |
| 4. Ոչ մի թագ չուներ եղջյուրներիվրա (Հայտնություն 13.11): | 4. Ոչ թե միապետություն, այլհանրապետություն: |
| 5. Կիրառում է իշխանությունը ինչպեսառաջին գազանը (Հայտնություն13.12) | 5. Դառնում է աշխարհի ուժեղագույնուժը: |



Պատմության մեջ մարգարեական սահմանման այս 5 կետերին համապատասխանում է միայն մեկ պետություն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ միավորվել է 1763 - 1800թ.թ.: Մենք տեսնում ենք **Հայտնություն 13.11-18-**ում, որ այն սկսվում է անմեղորեն, բայց վերջին ժամանակներում կվերածվի վճռորոշ համաշխարհային իշխանության: **Կանխագուշակված է, որ Ամերիկան *պատկեր շինելու* միջոցով մարդկանց կբերի *մահացու վերքից ողջացած գազանի երկրպագությանը*: Այդ պատկերն իրենից ներկայացնում է այն բանի ճշգրիտ պատճենը, ինչ իրենից ներկայացնում էր պապությունը իր տիրապետության 1260 տարիների ընթացքում:** Պատկերված երկրպագությունը ստիպում է միանշանակ եզրակացնել, որ խոսքը գնում է կրոնա-քաղաքական իշխանության մասին:

Դանիել 3.5,10,14,18,28-ում պարզաբանվում է, որ երկրպագությունը մարդկային պատկերներին – իշխանության խորհրդանշաններին հավասարեցվում է կռապաշտությանը – հակասում է Աստծո երկրորդ պատվիրանին (Ելից 20.4-6): Կիրակին իրենից ներկայացնում է իշխանության խորհրդանիշը՝ պապական հեղինակության նշանը, որը կարող է հաստատել իր սեփական պատվիրանները (**տե՛ս ստոր–, թե ինչպե՛ս է իրեն ներկայացնում կաթոլիկ եկեղեցին**):

Մարգարեությունը մեզ բացահայտում է, որ Ամերիկան ***«պատկերի»*** հաստատման միջոցով կպարտադրի սրբացնելու կիրակի օրը (*«գազանի դրոշմը»*): **Պատկերը ոչ այլ ինչ է, եթե ոչ ընկած բողոքականությունը էկումենիկ եկեղեցական միության մեջ, որը կմիանա պետական իշխանության հետ՝ կրոնական օրենքներն ուժով արմատավորելու համար:** Ամբողջ աշխարհը կհնազանդվի կիրակի օրը սրբացնելու հրամանին: Պապության հպարտությունն է համարվում այն, որ նա կարողացավ փոխել տասը պատվիրանները: Սա կդառնա ապագայի որոշիչ հարցը՝ կյանքի – մահվան հարցը (Հայտնություն 13.14,15) ՝ հնազանդվել Աստծու՞ն, թե՞ մարդկային որոշումներին (Մաղաքիա 3.18,19. Հայտնություն 16.2):

Ուշադրություն դարձրեք այն բանին, որ Ամերիկան ներկայումս *«...մեծ նշաններ է ցույց տալիս, այնպես որ երկնքից էլ կրակ կիջեցնի մարդկանց առաջին* (հիշե՛ք Հերոսիմայի վրա 1945թ. գցված ատոմային ռումբը կամ 1991թ. (նա– 1998թ. – 1999թ.) Իրաքում օդային պատերազմի մասին, կամ խարիզմատիկ այն շարժման կեղծ հոգ–որ կրակի մասին, որը ծագել է Ամերիկայում) *– «հրաշքներ, որ տրված է նրան կատարելու գազանի առաջին* (համեմատել Մատթեոս 24.24), *նա մոլորեցնում է երկրի վրա բնակվողներին այն նշաններով, որ տրված են նրա ձեռքը, որ գործի գազանի* (պապության) *առաջին՝ ասելով երկրի վրա բնակվողներին, որ պատկեր շինեն այն գազանին, որ սրի վերքն ուներ – ապրեց»* (Հայտնություն 13.13,14):



**Պապությունը հավակնում է այն բանին, որ շաբաթի փոխելը իր գործն է, – այն դիտում է որպես իշխանության նշան կրոնական հարցերում** (համեմատել Դանիել 7.25):

***«Կիրակին կաթոլիկական հաստատություն է*** *– այն պահելու պահանջը կարող է արդարացվել միայն կաթոլիկական սկզբունքներով: Սուրբ Գրքում սկզբից մինչ– վերջ չի գտնվի ոչ մի տեղ, որտեղ արդարացվում է ամենշաբաթյա պաշտամունքի տեղափոխումը շաբաթվա վերջին օրից առաջինը»* (Catholic Press, Sidney, 25.08.1900թ.):
*«Մենք շաբաթի փոխարեն պահում ենք կիրակին, **որովհետ– կաթոլիկ եկեղեցին** Լավոդիկեի ժողովում 364թ. **սրբությունը շաբաթից տեղափոխեց կիրակի»*** («The Converts Catechism of Catholic Doctrine» - Գայերմանի երկերից, որը 25.01.1910թ. Պիոս X պապից ստացավ «առաքելական» օրհնություն):
*«Յոթերորդ օրը՝ շաբաթը, պահեցին Քրիստոսը, Նրա առաքյալները – առաջին քրիստոնյաները – որպես այսպիսին՝ այն սուրբ օր էր համարվել այնքան ժամանակ, քանի դեռ Լավոդիկեի ժողովը նախ՝ համարյա վերացրեց դրա տոնումը – հետո՝ **արգելեց պահելու յոթերորդ օրը՝ շաբաթը՝ անեծքի սպառնալիքի ներքո»*** (William Prynne, անգլիացի հայտնի աստվածաբան, իր «Dissertation on Lord's Day» աշխատանքից, էջ 32):
***«Դա սուրբ կաթոլիկ եկեղեցին է հանգստի օրը շաբաթից տեղափոխել կիրակի՝ շաբաթվա առաջին օրը... Ո՞ր եկեղեցուն է հնազանդություն ցույց տալիս ամբողջ քաղաքակիրթ աշխարհը: Բողոքականները** ... դավանում են խոր երկյուղածություն Աստվածաշնչի հանդեպ, սակայն պահելով կիրակի՝ նրանք դրանով իսկ ընդունում են կաթոլիկ եկեղեցու իշխանությունը: **Աստվածաշունչն ասում է.** «Հիշի՛ր շաբաթ օրը՝ նրան սուրբ պահելու համար», **իսկ կաթոլիկ եկեղեցին ասում է.** «Ո՛չ, պաշտի՛ր շաբաթվա առաջին օրը», – ամբողջ աշխարհը հնազանդվում է նրան»* (Pater Enright, 15.12.1889թ.):
*«Հարց. Դուք ինչո՞վ կարող եք ապացուցել, **որ եկեղեցին իշխանություն ունի** տեղափոխելու հաստատված տոները: Պատասխան. Հենց նրանով, **որ նա տեղափոխել է շաբաթը կիրակի օրը**, – որ բողոքականները հավանություն են տալիս դրան, չնայած այդտեղ բացահայտ հակասություն գոյություն ունի, երբ նրանք խստորեն պահում են կիրակին, իսկ ուրիշ տոների մեծ մասը, հաստատված հենց այդ նույն եկեղեցու կողմից, մերժում են»* («Abridgement of Christian Doctrine», H. Tubervile, Donay - Kolleg, 1649թ. էջ 58):
**9.** Հայտնություն 13.18-ում մենք գտնում ենք հետ–յալ նշանը՝ գազանի թիվը. *«Ով որ միտք ունի, թող գազանի թիվը համարի, որ մարդի թիվ է, – նրա թիվը վեց **հարյուր վաթսունվեց է**»*:
Հռոմի պապի պաշտոնական անվանումներից մեկը **«VICARIUS FILII DEI»** է, որ թարգմանաբար նշանակում է **«Աստծո Որդու փոխանորդ»**: 18.04.1915թ. «Our Sunday Visitor» կաթոլիկ ամսագիրը ընթերցողի հարցին պատասխանում է. «Պապի (եռակի) թագի վրա փորագրված տառերն իսկապես «VICARIUS FILII DEI» են: Այս անվանումը *(որն ինքնըստինքյան աստվածահայհոյություն է, քանի որ նա չի հանդիսանում Քրիստոսի ճշմարիտ ներկայացուցիչը երկրի վրա, այսինքն՝ Սուրբ Հոգին)* (Հովհաննես 16.12-15, 14գլ. 26 գլ. Հռոմեացիս 8.26), հենց գազանի անունն է (համար




17): Ըստ 17 – 18 համարների՝ նրա անվան թիվն է 666:Քանի որ լատիներեն այբուբենում տառերն ունեն նա– թվային արժեք, պետք է միայն համադրել: Այս մարգարեությունը *հակաքրիստոսի* մասին է (համեմատել Բ Թեսաղոնիկեցիս 2.3-12, Ա Հովհաննես 4.3, Բ Հովհաննես 7, Հռոմեացիս 8.3): ***«Հակաքրիստոս»*** հունական բառը նշանակում է *«նա, ով նստում է Օծյալի տեղը (anti - նշանակում է փոխարեն, crio - նշանակում է օծել)»* Konkordantes NT, էջ 371:



Այս խոսքերով, ***այս** հակաքրիստոսը* հենց Քրիստոսի կարծեցյալ փոխանորդն է, հենց այն, ինչին պապը հավակնում է: Եթե պապը իրեն ներկայացներ Նոր Կտակարանի լեզվով, ապա նա պետք է այսպես ասեր. *«Ես հակաքրիստոսն եմ»:* Հիսուս Քրիստոսն Իր համբարձումից հետո միակ ճշմարիտ Քահանայապետն է երկնային Սրբարանում. *«Այնպիսի քահանայապետ՝... **պաշտոնյա սրբություններին – ճշմարիտ խորանին**, որը որ Տերը կանգնեցրեց – ոչ թե մարդ»* (Եբրայեցիս 8.1,2): Այստեղ Հիսուսը բարեխոսում է Իր զոհի արյունով ամեն օր՝ Երկնային Հոր շնորհաց աթոռի առջ– (Հովհաննես 14.6,13,14), որին մենք առանց մարդու միջնորդության, ինքներս, հավատով – ապավինելով Քրիստոսի քավիչ արյանը, ցանկացած ժամանակ աղոթքով կարող ենք մոտենալ (Եբրայեցիս 4.14-5.10, 7.25, Մատթեոս 6.6-15): Մարդկանց կամ «մեռած սրբերի» միջոցով լրացուցիչ միջնորդության մասին ուսմունքը, ըստ Հայտնություն 13.6-ի, իրենից ներկայացնում է *«գազանի հայհոյությունը **Աստծուն** – Նրա երկնային խորանին»* (համեմատել Դանիել 8.11-14, 12.11, այստեղ այս պարագան նկարագրված է որպես «ավերածի պղծություն» կամ հանցագործություն՝ Սրբարանի դեմ):

## Գազանի դրոշմը

Սա տարբերելու ցուցադրական նշան չէ, որը կպարտադրվի ամեն մեկին՝ նրա կամքին հակառակ: Եթե դրանից հնարավոր չլիներ պաշտպանվել, ապա Աստծո նախազգուշացումն այդ դրոշմը չընդունելու մասին անիմաստ կլիներ: Նրանք, ովքեր *գազանի դրոշմը* (**հեղինակության կամ պատկանելության նշան**) կմերժեն, նկարագրված են որպես *«...Աստծո պատվիրանները – Հիսուսի հավատը պահողներ»* (Հայտնություն 14.12): Այդ նրանք են, ովքեր ստացել են Աստծո կնիքը (Հայտնություն 7.34, 14.1)՝ հաղթելով գազանի դրոշմը (Հայտնություն 15.2, համեմատել Դանիել 3), որովհետ– գազանի դրոշմը պարունակում է Աստծո պատվիրանների խախտում (համեմատել Հակոբոս 2.10), քանի որ Աստծո կնիքը՝ Նրա Ուխտը, գտնվում է տասը պատվիրաններում (տե՛ս ստոր–):




Գազանի դրոշմը կընդունվի ճակատին կամ ձեռքին (Հայտնություն 13.16, 14.9): Ճակատը խորհրդանշում է գիտակցությունը (հավատը, համոզմունքը), ձեռքը խորհրդանշում է մարդկանց գործողությունը (պատվիրանների պահելը կամ չպահելը): Դա ցույց է տրված մեզ նա– Երկրորդ Օրինաց 11.8,18-ում (համեմատել Երկրորդ Օրինաց 13.1-6), որտեղ խոսք է գնում *բոլոր* պատվիրանները պահելու մասին:

**Ով հասկանում է չորրորդ պատվիրանի պահանջը, բայց մերժում է այն, ինչի մասին Աստված ասել է, որ դա Նրա հեղինակության նշանն է, ով դրա փոխարեն պատվում է այն, ինչ Հռոմը ընտրել է որպես իր գերիշխանության նշան, նա ընդունում է Հռոմի հետ միավորվելու նշանը՝ գազանի դրոշմը:** Երբ կիրակի օրվա մասին ազգային օրենքի միջոցով մարդիկ ընտրություն կանեն Աստծո – մարդկային պատվիրանների միջ–, այդ ժամանակ միայն օրենքը համառորեն չպահողները կընդունեն այդ դրոշմը: Կիրակի օրն անկեղծորեն պահողներին են նա– վերաբերում հետ–յալ խոսքերը. *«Բայց Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատվիրում է, ամենին ամեն տեղ ապաշխարել»* (Գործք Առաքելոց 17.30):

## Աստծո կնիքը

**Աստվածաշնչում նշանը կամ կնիքը օգտագործվում է մի–նույն նշանակությամբ** (Հռոմեացիս 4.11):
Պաշտոնական կնիքն իր մեջ ներառում է 3 տարր՝
1. Տիրոջ անունը (օրինակ՝ Արտաշես I):
2. Պաշտոնական դիրքը (օրինակ՝ թագավոր):
3. Իր իշխանության տակ գտնվող տարածքը (օրինակ՝ Հայաստան):

Աստծո կնիքը Նրա Ուխտի հավիտենական նշանն է՝ կապված Նրա օրենքի հետ, – գտնվում է չորրորդ պատվիրանում (Ելից 20.8-11). *«Հիշի՛ր հանգստյան օրը՝ նրան սուրբ պահելու համար: Վեց օր աշխատի՛ր – քո բոլոր գործն արա՛: **Բայց յոթերորդ օրը քո Եհովա Աստծո հանգստության օր է.** ոչ մի գործ չգործե՛ս, ո՛չ դու, ո՛չ քո որդին – ո՛չ քո աղջիկը, ո՛չ քո ծառան ու աղախինը, ո՛չ քո անասունը, ո՛չ էլ քո դռան օտարականը: **Որովհետ– Եհովան վեց օրվա մեջ արեց երկինքն ու երկիրը՝ ծովն ու բոլոր նրանց մեջ եղածները – յոթերորդ օրը հանգստացավ. նրա համար Եհովան օրհնեց հանգստության օրը – սրբեց նրան»*** (համեմատեք Ելից 31.13,17,18):




Չնայած այն բանին, որ Աստծո մոտ բոլոր պատվիրաններն ունեն մի–նույն կար–որ նշանակությունը (Հակոբոս 2.10), միայն չորրորդ պատվիրանում ենք գտնում Աստծո կնիքի նշանները՝
1. Աստծո անունը՝ ***«Ես՝ քո Տեր Աստվածը»:***
2. Տիտղոս ՝ ***«Արարիչ»:***
3. Իր իշխանության տակ գտնվող տարածքը՝ ***«Երկինքը – երկիրը, ծովը – ամեն ինչ նրանցում»:***

Աստվածաշունչը ներկայացնում է **շաբաթը** որպես Աստծո հավիտենական նշան. *«Անպատճառ իմ **(շաբաթները)** պահե՛ք, որովհետ– սա մի նշան է իմ ու ձեր մեջտեղը ձեր ազգերի մեջ, որ գիտենաք, թե ես եմ Եհովան՝ ձեզ սուրբ անողը»* (Ելից 31.13, համեմատեք Ելից 31.16,17, Եզեկիել 20.12,20):
Հիսուսն ասաց. *«Մի՛ կարծեք, թե ես եկա օրենքը կամ մարգարեները քանդելու, այլ՝ կատարելու: **Որովհետ– ճշմարիտն ասում եմ ձեզ, մինչ– որ երկինքն ու երկիրս անց կենան, օրենքից մի կետ կամ մեկ պստիկ նշանագիր չի անցնի, մինչ– որ բոլորը չկատարվի»*** (Մատթեոս 5.17,18):
Մի անգամ ինչ-որ մեկը մոտեցավ Հիսուսին – Նրան հարցրեց. ***«Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարի գործ գործեմ, որ հավիտենական կյանք ունենամ»:*** Հիսուսն էլ ասաց նրան. ***«Իսկ եթե կամենում ես կյանքը մտնել, պահի՛ր պատվիրանները*** *...մի՛ սպանիր, մի՛ շնացիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր»* (Մատթեոս 19.16-19):

Յոթերորդ օրը՝ շաբաթը, Աստծո օրենքի կար–որագույն մասն է, **որն ամեն շաբաթ հիշեցնում է Քրիստոսի մասին՝ որպես մեր Արարչի – Փրկչի:**
*«Սկզբումն էր Բանը. – Բանն Աստծո մոտ էր. – Բանն Աստված էր... Ամեն ինչ նրանով եղավ... – Բանը մարմին եղավ – բնակվեց մեր մեջ՝ շնորհով – ճշմարտությունով լիքը»* (Հովհաննես 1.1-3,14):

Քանանի երկիրը գնալիս Իսրայելի ժողովրդին խոստացված հանգստին համանման է շաբաթը՝ որպես հիշատակ երկնային Քանան տեղափոխվելիս խոստացված «շաբաթվա հանգստի» (Բ Պետրոս 3.13, Եբրայեցիս 11.10,39,40, Հայտնություն 21.2), որը կսկսվի Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ (Եբրայեցիս 3.10-19, 4.1-11, համեմատել Երկրորդ Օրինաց 4.1-2, Ա Կորնթացիս 10.11-13), «մարդկային պատմության անապատում» **6000** տարվա թափառումներից հետո, դրախտում մեղանչելուց ի վեր:
Եթե հաշվենք Աստվածաշնչում նշված տեղեկություններն այնտեղ նշված սերունդների կյանքի տարիների մասին՝ Ադամից մինչ– Քրիստոսը, ապա այն կկազմի մոտավորապես **4000** տարի (տե՛ս համաշխարհային պատմության ատլասը 1990թ. K. Thienemanns, Շտուտգարդ-Վիեննա հրատարակչություն): Այստեղից պարզ եր–ում է, որ մենք իրականում հասել ենք Աստծո կողմից նախասահմանված աշխարհի պատմության վերջին՝ **վեցերորդ հազարամյակի վերջին**: Քրիստոսի երկրորդ գալստյան վերաբերյալ Աստվածաշունչն ասում է մեզ. *«Տիրոջ մոտ մեկ օրը հազար տարվա պես է, – հազար տարին՝ ինչպես մեկ օր»:* (Բ Պետրոս 3.8):

Դուք հիմա իմացա՞ք, *«որ մոտ է, դռներին»* (Մատթեոս 24.33):
**Նոր Կտակարանում Աստծո ժողովուրդը կոչվում է *հոգ–որ Իսրայել*,** որը Հիսուս Քրիստոսի հավատի միջոցով կստանա սրտի հոգ–որ թլփատություն (համեմատել Կողոսացիս 11.25, Ա Պետրոս 2.9,10): Քրիստոսի հետ նոր միությունը՝ Նրա կյանքի կոչող ուժի միջոցով, նոր արարած է ստեղծում մարդու մեջ: Դա կանխագուշակված է Երեմիա մարգարեի կողմից. *«Այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրից հետո, ասում է Տերը: Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում – նրանց սրտի վրա պիտի գրեմ այն – ես պիտի լինեմ նրանց Աստված, – նրանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն»* (Երեմիա 31.31-33):

Այսպես՝ Աստծո ժողովուրդը միշտ սուրբ կպահի Նրա պատվիրանը. *«Եվ վիշապը բարկացավ այն կնոջ վրա – գնաց պատերազմ անելու նրա մյուս զավակների հետ, որ Աստծո պատվիրանները պահում են – Հիսուսի (Քրիստոսի) վկայությունն ունեն»* (Հայտնություն 12.17, կինը մարգարեության մեջ խորհրդանշում է եկեղեցին, անառակ կինը, ընդհակառակը, ընկած եկեղեցին: Համեմատել Բ Կորնթացիս 11.2, Եզեկիել 16, Հայտնություն 17, 18):

**Հիմա մենք գիտենք, թե ինչ է իրենից ներկայացնում երեք հրեշտակի լուրը Հայտնություն 14-ում:**

**1.** Այն մեզ ասում է, **որ հիմա Երկնային դատարանում** (համարներ 6,7) դատավարություն է տեղի ունենում *(այսինքն՝ վճիռը մեր հավիտենական կյանքի մասին):*

**2.** Այն մեզ ասում է, որ բողոքականությունը **նույնպես** ընկավ (համար 8) –, ըստ Հայտնություն 18.1-5-ի, *«...եղավ դ–երի բնակություն – ամեն պիղծ հոգու արգելոց»:* Հրեշտակը դիմում է բոլոր անկեղծ քրիստոնյաներին (Նրա ժողովրդին). ***«Դու՛րս եկեք դրանից, ո՛վ իմ ժողովուրդ, որ մասնակից չլինեք դրա մեղքերին – դրա պատուհասից չընդունեք»*** (Հայտնություն 18.4):

**3. Շատ լուրջ – Աստծո սիրով լի նախազգուշացում՝ ուղղված ամբողջ աշխարհին՝** Բոլորը, ովքեր երկրպագում են պապությանը կամ նրա պատկերին նրանով, որ, հակառակ բանականությանը, ենթարկվում են կիրակի օրը սուրբ պահելու պարտադրանքին, կընդունեն գազանի դրոշմը – կդատապարտվեն հավերժական մահվան (Հայտնություն 14.9-11):

**4.** 12-րդ համարը մեզ ցույց է տալիս մարդկանց մի խումբ, որը չի ընդունել գազանի դրոշմը: Նրանք պահում են Աստծո **բոլոր** պատվիրանները (ինչպես նա– շաբաթի պատվիրանը՝ յոթերորդ օրը, համեմատել Գործք Առաքելոց 7.38) – ունեն Հիսուսի հավատը:

## Կարո՞ղ եք արդյոք կանգնել դատի ժամանակ

Առաջին հրեշտակն ասում է Աստծո դատաստանի մասին, որը տեղի կունենա երկնքում՝ Քրիստոսի երկրորդ գալուստից **առաջ** (համեմատել Դանիել 7.9-12, Բ Կորնթացիս 5.10), քանի որ Նրա հայտնվելուց առաջ պետք է հաստատված լինի, թե ով պետք է մահից փոխվի դեպի հավիտենական կյանք – ով պետք է Նրա հայտնության ժամանակ կենդանի վերցվի (հափշտակվի) երկինք (Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17, Հովհաննես 5.27-29, Հայտնություն 20.5-6):
Դեռ ավելին, Աստվածաշունչն ասում է երկնքի դատի մասին հազարամյակի ընթացքում՝ Քրիստոսի երկրորդ գալուստից **հետո**, որին բոլոր հավատացյալները կմասնակցեն որպես «դատավարողներ»՝ ընկած հրեշտակների – անհավատ մեռածների նկատմամբ դատավճիռ կայացնելու համար (Դանիել 7.22, Ա Կորնթացիս 6.2-3, Հայտնություն 20.4), որը հազարամյակից **հետո**՝ բոլոր անհավատների հարության ժամանակ, կիհայտարարվի – կիրագործվի (Հայտնություն 5.29, 20.7-15):
Աստծո դատաստանում անփոփոխ չափանիշ են հանդիսանում տասը պատվիրանները (Ժողովող 12.13,14, Հայտնություն 11.19, Սաղմոս 88.35, Մատթեոս 7.21), ինչպես նա– Հիսուսի սրտի օրինակելի մտադրությունները (Փիլիպպեցիս 2.5, Հռոմեացիս 15.5), որոնց մասին ասվում է. *«Քո կա՛մքը կատարել կամեցա, ո՛վ Աստվածս, – քո օրենքն իմ սրտի մեջ է»* (Սաղմոս 40.8, համեմատել Հովհաննես 6.38, 4.34, Սաղմոս 40.8-10. Եբրայեցիս 10.9, Ղուկաս 22.42):



«Հայր մեր»-ում մենք, ճիշտ է, աղոթում ենք. *«Թող լինի քո կամքը»*, բայց ինչպե՞ս է մեր մեղավոր կյանքում փաստորեն իրագործվում Աստծո կամքը: Աստվածաշունչն ասում է մեզ. *«Մեղքն անօրենություն է»* (Ա Հովհաննես 3.4), – *«մեղքի վարձքը մահ է»* (Հռոմեացիս 6.23): Մարգարեն ասում է. *«Մի՞թե եթովպացին կփոխի իր մորթը, կամ ինձը՝ իր խայթոցները, որ դուք էլ կարողանայիք բարություն անել, որ սովորած եք չարություն անելու»* (Երեմիա 13.23, համեմատել Հռոմեացիս 7.24), բայց եթե մենք քննենք մեր սեփական կյանքը, ապա կգիտակցենք, որ չենք կարող խուսափել Աստծո դատաստանից – հավիտենական մահից: Աստված փրկության ճանապարհ է պատրաստել բոլոր մարդկանց համար, ովքեր նախկինում եղել են սատանայի գերիներ: Աստծո սիրո այս ճանապարհը կոչվում է:

**«Հիսուս Քրիստոս»:** *«Որովհետ– Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տվեց, որ ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»* (Հովհաննես 3.16): Գողգոթան կանգնած է որպես անըմբռնելի զոհաբերության հուշաբլուր, զոհ, որն անհրաժեշտ էր, որպեսզի ծածկեր Աստծո օրենքի խախտումը: Ուստի չի կարելի մեղքին նայել որպես մի թեթ– բանի (Հռոմեացիս 6.15 – մնացածը): Աստծո առաջարկած շնորհը հասարակ առաջարկ չէ. այն պահանջում է ձեր համաձայնությունը – լրիվ ինքնուրացումն Աստծո համար: Հիսուսն ասում է. *«Ես եմ ճանապարհը, – ճշմարտությունը, – Կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով»* (Հովհաննես 14.6): Հիսուսն Իր կյանքով մեզ ցույց տվեց ճանապարհը դեպի Հայրը, Ճանապարհը դեպի հավիտենական կյանքը:



Կտրոն

Քրիստոնեական գրականություն նԱստվածաշնչի ուսումնասիրությանդասեր ձեռք բերելու համար

„Մեծ պայքար” ○
Այս գիրքը թարգմանված է 45 լեզուներով: Նկարագրում է այնլուսը,որը բացում է Աստվացաշունշրանցյալի,ներկայի և ապագայի մասին:

”Սպասվող իրադարձությունները” ○
Այս գիրքը ունի 80 էջ:Նկարագրում էկարևոր զգուշացումն երըԱստվացաշնչի,գազանի դրոշմիմասին (Հայտնութուն 13:18): Այս իրական նշանակություն նսկարևոր ազդեցություն ունիմարդկանց վրա,որոնք ապրում ենվերջին ժամանակներում:

Հեռակա կուրսեր „Նոր կյանք” ○
Այս ավելացրած ձրի հեռակակուրսերը ձեզ կոգնեն լավ հասկանալԱստվածաշունշը և ցույց կտաիրական կանխատեսումը,որոնք որկատարվել ենանցյալում,կատարվում է ներկայումն որոնք որ կատարվելու ենապագայում քաղաքական,հոգևոր ևբնապահպանական աշխարհայինիրադարձությունները: (Ձրի կրթականգրականություն)

Ձեր հասցեն.______________________________
ինդեքս ______________________________
քաղաք, գյուղ______________________________
փողոց, N ,բն______________________________
անուն.,ազգանուն,հայրանուն ____________________
______________________________

Խնդրում ենք նշեք,կտրեցեք այսկտրոնը և ուղարկեք տպագրողին:

**Freie Gemeinde Historischer Adventisten e.V.**
Postfach 270209
13472 Berlin

Mail: post@fgha.de * www.fgha.de
www.freie-gemeinde-historischer-adventisten.de
Այս ամենը ձրի է առանցպարտադրությունների:

**Ինչպե՞ս մենք կարող ենք ստանալ հավիտենական կյանք Հիսուս Քրիստոսի միջոցով:**

Հիսուսը պատասխանում է այսօր, ինչպես – այն ժամանակ. *«Պահի՛ր պատվիրանները ... – հետ–ի՛ր ինձ»* (Մատթեոս 19.17,21, համեմատել Ա Պետրոս 2.21-25, Հայտնություն 14.4):
Հետ–ել Նրան՝ այսօր էլ նշանակում է ուսումնասիրել Նրա կյանքը կյանքը Սուրբ Գրքում (Հովհաննես 5.39, 8.31,32) – հնազանդվել Նրա խոսքին (Հովհաննես 3.36, Եբրայեցիս 5.8,9, 11.8, Հակոբոս 4.7, Հռոմեացիս 16.26): Սուրբ Հոգին կառաջնորդի մեզ, ինչպես Պենտեկոստեի ժամանակ, երբ մարդիկ գիտակցեցին իրենց մեղքերը – բացականչեցին. *«Ի՞նչ անենք»*: Պետրոս առաքյալի պատասխանը հնչեց. *«Ապաշխարե՛ք»* (Գործք Առաքելոց 2.37,38): Ուրիշ ժամանակ նա ասաց. *«Ուրեմն՝ զղջացե՛ք – ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն»* (Գործք Առաքելոց 3.19):



Աստծո օրենքը, ինչպես հայելի, ցույց է տալիս, թե ինչքան ենք մենք պղծված մեղքերով (Հռոմեացիս 4.15, 3.20, 7.7), որոնք Հիսուսն ուզում է լվանալ Իր քավիչ արյունով: Սա հենց մարդու պատասխան սիրո առաջացման պահն է Աստծո հանդեպ:

Հիսուսն ասում է մեղավոր կնոջը. *«Սրա շատ մեղքերն իրեն թողված կլինեն, որովհետ– շատ սիրեց»* (Ղուկաս 7.47): *«Մենք սիրենք նրան, որովհետ– առաջ նա սիրեց մեզ ... Որովհետ– սա է* (պատասխան) *Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահեք, – Նրա պատվիրանները ծանր չեն»* (Ա Հովհաննես 4.19, 5.3): Հիսուսի նկատմամբ սերը, ինչպես նա–մեղքերը հաղթելու ուժը, մեզ մոտ առաջանում է Աստծուց: *«Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանները պահեցե՛ք... – Հայրը ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ ... Ճշմարտության Հոգին»* (Հովհաննես 14.15-17):

Սերը – Սուրբ Հոգու տված ուժը մեզ կարող կդարձնեն հաղթելու մեղքն այնպես, ինչպես հաղթեց Հիսուսը (Հովհաննես 15.10, Ա Հովհաննես 5.4-5, Հայտնություն 3.21):

Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի մարմնավորման շնորհիվ (Փիլիպպեցիս 2.5-8, Հովհաննես 16.28) մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված գիտի, թե ինչպիսի ուժ մեզ պետք է պարգ–ի, որպեսզի մենք հետ–ենք Նրա պահանջներին – կարողանանք դիմակայել մեր թույլ, մեղավոր մարմնի փորձությանը:
*«Արդ, որովհետ– մանկունքն արյունի – մարմնի մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղավ նրանց, որ իր մահով խափանի մահի իշխանություն ունեցողին, այսինքն՝ սատանային: Եվ ազատի նրանց, որ մահի վախով իրենց բոլոր կյանքի մեջ ծառայության մեջ բռնված էին: Որովհետ– բնավ հրեշտակների ձեռք չի տալիս, այլ Աբրահամի սերունդին է ձեռք տալիս: Ուստի պետք էր նրան, որ բոլորովին եղբայրներին նմանվի, որ ողորմած լինի – հավատարիմ քահանայապետ Աստծո առաջ, որ ժողովրդի մեղքերը քավի: Որովհետ– ինքը, որ չարչարվեց – փորձվեց, կարող է օգնություն տալ փորձվողներին»* (Եբրայեցիս 2.14-18):

### «Փրկիր քո հոգին ...որպեսզիչկործանվի» (Ծննդոց 19.17)

«Ավելին,մենքունենքհստակմարգարեական խոսք, եւ դուք լավէիք անում, որ դուք դիմում եքնրան,որ լույս է տալիս մութ տեղը, մինչեւ որ լուսաբացին եւառավոտյան աստղը բարձրանում էձեր սիրտերում մէջ»
(2 Պետրոս 1.19)

«Քննեցէք Սուրբ Գիրքը, որովհետեւկարծում եւ անոնցմով ունենալյաւիտենական կեանք եւ նրանքվկայում են Իմ մասին»
(Հովհաննես5:39):

«Տեղացիները աւելի խելացի էին, քան Թեսաղոնիկէի մէջ եղողները, նրանք ընդունեցին խոսքը եռանդով, ամեն օր Աստվածաշունչուսումնասիրելով, արդյոք դայադպես է»: (Գործք 17.11):

Կարդացեք Մեծ պայքար



Մենք կարող ենք ստանալ մեղքին հաղթող այդպիսի ուժ միայն այն ժամանակ, երբ կհավատանք (Հովհաննես 6.28,29) Հիսուսի օրինակելի արդարությանը (Անմեղը՝ մարմնավորված մեղքի ենթակա մարմնում, համեմատել Հռոմեացիս 8.3, Եբրայեցիս 4.15) – հավատով կընդունենք յուրաքանչյուրս Նրա անձնազոհ մահը մեր փոխարեն (Հովհաննես 3.16, 1.29):
Հիսուսը մեռավ ոչ թե Իր անձնական մեղքերի համար, քանի որ գրված է *«Հաշտվեցե՛ք Աստծո հետ: Որովհետ– Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղքի զոհ արեց»* (Բ Կորնթացիս 5.21, համեմատել Ա Հովհաննես 3.5, Հովհաննես 8.46): Սակայն դա նշանակում է, որ մենք պետք է մեր մեղքի համար ապաշխարենք, այն գիտակցենք – դրանից (Աստծո օրենքի խախտումից) ետ դառնանք ու խոնարհությամբ հետ–ենք Նրան (Առակաց 28.13, Ա Հովհաննես 1.6-10, 2.4, 3.3-10, Ա Պետրոս 2.21, Մատթեոս 10.34-39):

Հավատ – ապաշխարություն՝ սրանք Աստծո պարգ–ն են, որ տրվում են նրան, ով անկեղծորեն փնտրում է: Աստված դրանք արթնացնում է մեր մեջ Իր Սուրբ Հոգու միջոցով, եթե մենք միայն Նրան դրա համար հնարավորություն ենք տալիս: Հավատը գալիս է լսելուց – Աստծո խոսքի ուսումնասիրումից (Հռոմեացիս 10.17): Հիսուսն ասաց. *«Քննեցե՛ք գրքերը, որ դուք կարծում եք, թե նրանցով ունեք հավիտենական կյանք, – նրանք են, որ ինձ համար վկայում են»* (Հովհաննես 5.39, համեմատել Ղուկաս 24.27, Հովհաննես 2.22, Հռոմեացիս 16.26, Գործք Առաքելոց 17.11,12):

Զարմանալի կերպով կատարվող Աստծո կանխագուշակումների ուսումնասիրումը (դարեր առաջ կանխագուշակված է համաշխարհային պատմությունը – Նրա Որդու հայտնությունը) մեզ համոզում է Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծո փրկության ծրագիրի ճշմարտացիության մեջ – հավատի հուսալի հիմք է ստեղծում նա– ապագա իրադարձությունների հանդեպ (Բ Պետրոս 1.19-21):



Աստծո խոսքի անկեղծ ուսումնասիրման դեպքում մեզ խոստացված է անտեսանելի աստվածային Ուսուցիչ. *«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկի իմ անունով, նա ամեն բան կսովորեցնի ձեզ – կհիշեցնի ձեզ ամեն ինչ, որ ձեզ ասացի ... կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ ... քո խոսքը ճշմարտություն է»* (Հովհաննես 14.26, 16.13, 17.17):

Ով մերժում է Աստծո շնորհը, գիտակցաբար չի լսում ճշմարտության խոսքերը, չի կարդում դրանք – չի ուսումնասիրում, նա Աստծուց չի ստանա հավատի ոչ մի փրկարար ուժ – մի անգամ կհայտնվի նրանց շարքերում, ովքեր ընդմիշտ կորած են (Երեմիա 6.17-19, 9.12-15, Ովսեե 4.6):

*«Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ – չի նախատում, – կտրվի նրան»* (Հակոբոս 1.5): Հիսուսն ասում է մեզ. *«Խնդրեցե՛ք, – կտրվի ձեզ ... Արդ, եթե դուք, չար լինելով, գիտեք բարի պարգ–ներ տալ ձեր որդկանց, որքան ավելի ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են իրենից»* (Մատթեոս 1.7,11): Միայն այնպես խնդրեք, ինչպես դա արեց Դավիթը. *«Սուրբ սի՛րտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված, – ուղիղ հո՛գի նորոգիր իմ ներսում»* (Սաղմոս 51.10, համեմատել Սաղմոս 139.23,24):



Ով անկեղծորեն հավատում է – աղոթում, անձնական փորձառություն է ձեռք բերում. *«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»* (Փիլիպպեցիս 4.13):
Միայն անկեղծորեն հետ–ելով Քրիստոսին – ապավինելով Նրան՝ որպես մեր կենդանի Փրկչի՝ մենք կարող ենք զարգացնել մեր մեջ այնպիսի բնավորություն, որը նման կլինի Նրա բնավորությանը, որպեսզի այդ կերպ պատրաստ լինենք մեր Տիրոջ երկրորդ գալուստին. *«Սա է այն ուխտը, որ կդնեմ նրանց հետ այն օրերից հետո, ասում է Տերը, կտամ իմ օրենքները նրանց սրտերի մեջ – նրանց խորհուրդների վրա կգրեմ նրանց»* (Եբրայեցիս 10.16, համեմատել Երեմիա 31.33):

Հիշենք, որ Եդեմի այգում մարդկանց հնազանդությունը փորձվեց մեկ ծառի պտղով (բարու – չարի ճանաչման ծառը՝ Ծննդոց 2.16-17): Մեր օրերում հնազանդությունը դարձյալ կփորձվի մեկ հատուկ պատվիրանով (Հակոբոս 2.10): Փորձիչ օձն ասաց այն ժամանակ. *«Իրա՞վ ասաց Աստված»* (Ծննդոց 3): Ինչպիսի՛ աղետալի հետ–անքների հասցրեց մարդուն այդ անհնազանդությունը: Աստծո պատվիրանի միանշանակության մեջ կասկածանք է սերմանվում մարդկանց սրտերում նա–այսօր Աստծո հակառակորդի կողմից. *«Իսկապե՞ս Աստծուն այդքան կար–որ է այդ յոթերորդ օրը»:*

Եթե պետք է հաստատվի, որ կիրակին ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկային պատվիրան, ապա չպետք է մոռանալ Հիսուսի խոսքը. *«Եսայիան լավ մարգարեացավ ձեզ՝ կեղծավորների վրա ... – զուր տեղն են պաշտում ինձ՝ սովորեցնելով այնպիսի վարդապետություններ, որ մարդկանց պատվերներ են: Որովհետ– Աստծո պատվիրանը թողած՝ պահում եք մարդկանց ավանդությունը»* (Մարկոս 7.6-9):
Ինչպես նա– Եզեկիել մարգարեի միջոցով Աստված նախազգուշացնում է Իր ժողովրդին. *«...Ձեր հայրերի կանոններով մի՛ գնաք, – նրանց* [սովորությունները] *մի՛ պահեք, – նրանց կուռքերով մի՛ պղծվեք: Ես եմ ձեր Տեր Աստվածը, իմ օրենքներով գնացե՛ք, – իմ իրավունքները պահեցե՛ք, – կատարեցե՛ք: Եվ* ***իմ շաբաթները*** *սրբեցե՛ք, որ դրանք* ***նշան*** *լինեն իմ մեջ – ձեր մեջ, որ իմանաք, թե ես եմ Տերը՝ ձեր Աստվածը»* (Եզեկիել 20.18-20, Երեմիա 9.12-14):

Մարդկային պատվիրանները – ավանդույթները մեզ չեն ազատում քրիստոնեական սկզբունքից. *«Աստծուն պետք է ավելի հնազանդել, քան թե մարդկանց»* (Գործք Առաքելոց 5.29, 4.19): **Դուք ի՞նչ եք որոշելու՝ պահել Տիրո՞ջ շաբաթը, թե՞ պապի կիրակին** (Երեմիա 10.2, Գ Թագավորաց 18.21, Ա Թագավորաց 15.22,23):

Սուրբ Հոգին ասում է մեզ. *«...այսօր, եթե նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը... Որովհետ– նրա հանգիստը մտնողը ինքն էլ հանգստացավ իր գործերից, ինչպես Աստված էլ իրաններից: Ուրեմն ջանա՛նք այն հանգստի* (շաբաթի) *մեջ մտնելու, որ մի գուցե մեկը նույն անհավատության օրինակի պես ընկնի»* (Եբրայեցիս 4.7,10-11):

Միայն նրանք կազատվեն – կփրկվեն, որոնց մասին Աստվածաշունչն ասում է. *«Այստեղ է սուրբերի համբերությունը. այստեղ են Աստծո պատվիրանները – Հիսուսի հավատը պահողները»* (Հայտնություն 14.12):

Շուտով սարսափելի պատուհասներ – դատաստաններ կթափվեն այն բոլոր մարդկանց վրա, ովքեր կընդունեն գազանի դրոշմը, անունը – թիվը կամ կերկրպագեն գազանին – նրա պատկերին (այսինքն՝ կհնազանդվեն հակաաստվածային կրոնաքաղաքական հեղինակությանը) – դրանով իրենց կհակադրեն Տիրոջ միանշանակ կամքին – Նրա նախազգուշացմանը (Հայտնություն 13.16-18, 14.9-11, 16.2, 18, 19.19-21):

Դատաստանի մասին այս լուրը կարող է ոմանց մոտ վախ առաջացնել, բայց այն, վերջին հաշվով, սիրող Աստծո փրկարար լուրն է, Ով *«...չի կամենում, որ կորչողներ լինեն, բայց որ ամենքն ապաշխարության հասնեն»* (Բ Պետրոս 3.9): Ամեն մի անկեղծ հավատացյալ կհամոզվի. *«Իմաստության սկիզբը Աստծո երկյուղն է»* (Առակաց 1.7, համեմատել Ղուկաս 12.4,5, Ելից 20.20): Վախն առաջանում է միայն մեղքից (տես Ծննդոց 3.10,11), բայց երբ մենք ընդունենք – հասնենք մեղքերի ներման՝ Աստծո սիրո միջոցով Հիսուս Քրիստոսում, այն ժամանակ կիմանանք. *«Վախ չկա սերի մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը... Մենք սիրենք նրան, որովհետ– առաջ նա սիրեց մեզ»* (Ա Հովհաննես 4.18,19):

Կորած լինելու զգացումը փոխվում է փրկության գիտակցման, իսկ Աստծո հանդեպ վախը՝ երկյուղածության ու սիրո, անելանելիությունը փոխվում է նպատակասլացության – վախը՝ Աստծո խոստման ցնծագին ակնկալության: Դա Աստծո շնորհն է, ապաշխարելու – դարձի գալու հնարավորությունը դեռ–ս ուժի մեջ է բոլորովին կարճ ժամանակ: Օգտագործե՛ք այդ ժամանակը ձեր անձնական վիճակի լուրջ քննման – դարձի գալու համար, քանի որ շնորհաց ժամանակն ավարտվում է Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ: Ժամանակի նշանները վկայում են մեզ, որ դա **համաշխարհային պատմության ամենավերջին ժամանակն է:**

***«Բայց Տիրոջ օրը (գիշերվա) գողի պես կգա, որ նրանում երկինքը շառաչյունով կանցնի, – տարերքը կրակով վառված կհալվեն, – երկինքը – նրանում եղած բոլոր բաներն էլ կայրվեն ... ջա՛նք արեք, որ անբիծ – անարատ գտնվեք նրա առաջին խաղաղության մեջ»*** (Բ Պետրոս 3.10,14, համեմատել Եսայիա 55.6-9, Մաղաքիա 3.17-20):

***«Բոլոր խոսքի վախճանը լսենք. Աստծուց վախեցի՛ր –*** *նրա պատվիրանները պահի՛ր, որովհետ– սա է ամեն բան մարդիս համար: Որովհետ– Աստված ամեն գործը բերելու է դատաստան ամեն ծածուկ բանի հետ՝ թե՛ բարի, թե՛ չար»* (Ժողովող 12.13,14):

